

ՀՀ Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստ

ՕՐԱԿԱՐԳ

12.05.2015թ.

12⁰⁰ Նիստի մեկնարկ: Բացման խոսք՝ մարզպետ, խորհրդի նախագահ
Ա. Ղահրամանյան:

12¹⁵ Օրակարգի ներկայացում և հաստատում:

12³⁰ Համապետական տոներին և միջոցառումներին երիտասարդության
ներգրավվածությունը բարձրացնելուն ուղղված հարցերի
քննարկում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստի

12.05.2015թ.

ք. Արմավիր

Նիստը վարում էր ՀՀ Արմավիրի մարզպետ, Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահ Ա. Ղահրամանյանը, նիստին ներկա էին խորհրդի 20 անդամներից 16-ը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի երիտասարդության հարցերը համակարգող Ա. Առաքելյանը:


Օրակարգում ընդգրկված էր մեկ հարց՝

1. Համապետական տոների և միջոցառումներին երիտասարդության ներգրավվածությունը բարձրացնելուն ուղղված հարցերի քննարկում:

Նիստի օրակարգը հավանության արժանանալուց հետո խորհրդի անդամները քննարկեցին օրակարգի 1-ին կետում վեր հանված խնդիրները:

Մյասնիկյանի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Թեհմինե Ղազարյանը առաջարկեց առաջիկա ամիսներին սպասվող տոների, մասնավորապես հուլիսի 5-ին ՀՀ Սահմանադրության ընդունման 20-ամյակին և պետական խորհրդանիշների օրվան նվիրված միջոցառումներին առավելագույնս մասնակից դարձնել դպրոցականներին ու երիտասարդներին, ինչը արժանացավ մյուսների հավանությանը:

Խորհրդի նախագահ՝



Ա. Ղահրամանյան

Խորհրդի քարտուղար՝



Ա Ավետիսյան